

ՂԱՓԱՆԻ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Հաւարաց Երբայիկ

ԿՐՕՆԱԿԱՆ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.

I. Քրիստոս Գերկարարի աւակեօր

Քրիստոս քեցալ ա մըն ներկարարու զոննուդ արալ: Մըն-
հետ ըրուգունը որ զանգը տալ ըն, ուստան քեցալ ա ժամ,
Քրիստոսէն ալ ասալ՝ թիւ լըւանայ, թակէ թակէ զոչկանը ու-
րան կեալը: Դոչանը ժըմըտեղա կեալը, Քրիստոս լըւանում ա,
տանումնի տալիս կըրասէն մաչը, կըրըսխառնաւ խառնում: Ուս-
տան կեալիս ա թա պա հիւնչ ըս ըրալ թիւ: Թա՛ տարալ ըմ նի
տալ կըրասէն մաչը. կըզնըւում ա քինում կըրըսխառնին եր
օնում յետան ընգնում, քմական որ պան ա տալիս, քինում ա
վեղումը զարիս ընում: Քրիստոս խաչակնքում ա կըրըսխառնին
կընանչում ա: Ուստան վանջ-վանջ ընելաւ քինում ա, թա՛ թիւս
խարաբ ա տեաւ, որ կըրասան տիւս տայ, տեսնում ա, որ թի-
լիբը օման ալ ուրան օգածը ըռանգաւը ներկաւ ըն՝ կեարմուրը
ճոկ, տեղէնը ճոկ, կանաչը ճոկ: Ուստան կլիսու ա ընգնում, որ
էն Քրիստոս ըլալ: Թա՛ ես մեղայ Աստծու, էն Քրիստոս ըլալ,
ես ճընընչեցալ չիմ: Մըն կըլիսէն ա թխում, մըն ծընգանը, ալ
ըշտեղ, պենը պենան ընցած ա ընում. ալ Քրիստոս ա ես
արճալում:

II. Քրիստոս դիւզարի աւակեօր

Նըրկարարէն կշտան Քրիստոս ահետ քինում ա դիւզարու
մօտ- դիւզարէն մըն ժուկ ծառայում ա: Մըն հետ սրան ըն ըլալ
չինում. ուստան ըրուգունը ժամու վախտ մըն կերան ա նշանց
տալիս, երան խաղում, թա՛ ըստեղան կտրէ, ալ օրիշ պեն չիս
անել: Քրիստոս դիւզալաւ ըստէն ասած տեղը թողում ա, կարճ
կտրում, հանց անում, որ հըսնէ ոչ. զէ ալլըհան ուրան ծեռքան
ա ընցնուու: Ուստան ժըմըտեղան կեալիս ա տեսնում, որ ուրան

ասած տեղան թողած ա, հանց կտրած, որ ալ ամալ կիվող չի. կղնուժ ա թա՛ յիմանք, ես ըստեղաս ըմ ըլալ ասած, որ կտրալ ըս կըրճըցրա՛լ: Թա՛ դէ՛ հւստա, հի՛նչ կան որ, կարուղըք ըրգընցնիք, մեր ձեռքէն չի՛, համ մըն խրեց ծիք կտաք: Ուստան ծըծաղուժ ա, ուրան մաշին ասուժ՝ էս առնի յիմար ա, մա՛շըմ փաղը ծիք տալաւ կըրգընանայ: Քրիստոս թա՛ Ո՛ւստա, տու ձեռքդ տեղադ երայ հարէ կերանէն, ես քաշիմ ըրգընանայ: Ուստան Քրիստոսէն յիմարու տեղ տինիլաւ, ձեռքերը երայ ա հարուժ. Քրիստոս ծեռքը քցում ա, ծիք տալիս, ըրգընցնում, տանում ուրան տեղը ոննը անում. որ պրծնում ա, աներևութ ա տե՛նում: Ուստան մնալիս ա միս քըշիլիս թա՛ պա էն Քրիստոս ըլալ ես ճընընչեցալ չիմ: Շատ ա փըշմանում, համադէ հի՛նչ կարուղ ըլալ անէ:

III. Քրիստոսի նրաեացործութիւնը

Հայոց Արգար թագաւորը պիրալ ա ուրան ճոխտ աչքերը տիւս օնել տըլալ, թա որ տիւղ տիւան անէ՝ հարուստն ան քեասիրը, բեազն ան ըոըհաթը ճոկէ ոչ: Քրիստոս աշխարհք շոռ կեալիս վախաը թա՛ թա եկ քինիմ մըն փորձիմ հունց ա շար կարում: Կեալիս ա մըն պըռաւու զոնաղ ընգնում. քըշըհանը յղէ ընգնելիս տեղը, էդ պըռաւէն մըն վերթն ա ընում, խաչակնքում ա, կա՛վը թողում ա, վաղ տալիս ընգնում ճորու՛ն տակը, յետան եր ա օնում, որ քինի. պառաւը հարչանք հայ-հայ ա անում, թո իմ վերթն ա, ըշտեղ ես տանում, Քրիստոս եշում չի. թա՛ քու կղէնն ա, եր կալ տար քցի կվէդ տակը, խէ ա ճորուս յետան կեալիս: Ճոխտն ալ քինում ըն Արգար թագաւորէն կոշաը կենդատ: Պառան ասում ա. «Տէր, մուք կենդատ օնիք, էս մարթս եկալ ա իմ տանս զոնաղ ընգալ, մհինգ իմ վէրթս եր ա կալած քցած ուրան ճորու՛ն տակը, տանում, թա՛ իմ ճորու՛նն ա»: Քրիստոս ասում ա. «Իմն ա, որ ընդրանը ընի կըվէն տակէն կկենայ, ճորուս ետան կեալ չի»: Թագաւորը միտք ա անում, ալ խօսում չի: Քրիստոս ասում ա. «Ես ճանապարհորդ ըմ, խէ՛ չիս մեր կենդատը կարում»: Թագաւորն ասում ա. «Մըն օրիշ պին կան, ընդրա ըմ միտք անում, ձեգանից առաջ մըն կնգատաւոր եկալ ա ասալ՝ թա ծա՛վէն զրաղէն կեարի ըմ վարած, ծըկնեըը տիւս ըն կեալիս օման քիշեր օտում: Քրիստոս թա՛ «Պա ծուկնը—կեարիք»: Թագաւորը թա. «Պա ճորէն վէրթ»: Քրիստոս խաչակնքում ա, վերթը մօրը տակն ա ընգնում, մարն ալ եր ա օնում, մըն ալ խաչակնքում ա թագաւորէն աչքերը սըղանում ըն, ինքն ալ անայտանում ա: Արգար թագաւորը թա. «Երանի՛ քեզ, այ պառաւ,

էն Քրիստոս ըլալ, տու տեսալ ըս, մըղափուն, որ ես յիմարոթուն ըմ ըրալ աչքերս հանալ, ընտուր տեսութիւնան զրկալ:

V. Քրիստոս օրհնում է եռնջի արմատը

Մայրան-Աստուածածինը մըն հետ ըղանձատ ա օտում. Քրիստոս ալ հալում հէն ա ընում խտաէն. մարդ ալ որ ըղանձատ օտէ կաթնը շտտ կըքըղցրանայ: Քրիստոս մտնում ա մօրը դիւրգը ծեծ օտում, թա՛ նանէ. էս հի՛նչ ըս ըլալ կերած, որ կաթնըդ էսչուքէն քաղցր ա: էն ալ օղում չի դիւզ ասէ, թա՛ դէ եոնջա ըմ կերած: Քրիստոս թա՛ դէ որ ըտի ա,

Թող մըն տարէ վարին,

Օխտը տարէ հարին:

Մարը փըշմանում ա, որ խաբալ ա, թա՛ եոնջա չիմ ըլալ կերած է, ըղանձատ ըմ ըլալ կերած: Թա՛ ալ ընցած ա, հինչ ասալ ըմ, ալ ասալ ըմ:

Ըտուր հետէ ա, որ եոնջան մըն հետ որ վարում ըս, օխտը տարէ հարում ա:

Բ.

Սողոմոն իմաստուն

Սըղումուն իմաստունը ինքը շատ մեծ իմաստուն ըլալ, շատ ալ մեծ քարոզող. քեցալ ա Փարաւոն թագաւորէն աղջիկն օղալ. ասալ ա՛ տալ չիմ, տու հճւղ ըս, որ տամ, մըն բուգալա տղայ ըս, տու կըկարիս որ ինձ նհետ կուե տաս, թա կարիս, աղջիկս կըտամ: Ասալ ա՛ ինձ օխտն օր մոհլաթ տոր, պատրաստոթուն տեսնամ, քեզ նհետ կուե տամ: Սողոմոն իմաստունը ետ ա տեռալ քէցալ տափէն տակէն հինչ որ շու կիվող կոն՝ մչերմը, մոկնը, պղուճ, ըտուց թագաւորնուն հրամայալ, թա Փարաւոն թագաւորէն ղոշունէն ամբարէն պիւրիպասը հանց կըաշիք, որ դատ չմնայ: Ըտրանք դոշանը օխտն օր թմամիւր թագաւորէն ըմբարորմը հինչ որ այլեր, պիւրիպաս ըլալ, քաշալ ըն տափէն տակը: Փարաւոն թագաւորէն երակացունեն քեցալ ըն տեսալ ըմբարումը ոչ այլեր կան, ոչ ցորեն, թամուզ պրծած ա. օխտն օրը որ թըմամում ա, Սըղումուն իմաստունը հրամայում ամ, թա՛ քու ղոշունդ ալ եր կալ եկ փլան դիւզը, որ իմ ղոշունս ալ ա կեալու ընտեդ: Փարաւոն թագաւորէն ղոշունը կեալիս ա էն տիւղումը սանգեար տալիս, որ էզուց Սողոմոն իմաստունէն

դոշունն ալ կեայ, Ըրուզունը իրիթնակը մըրմուրէն Սուղումուն
 իմաստունը հրամայում ա ծովէն թոխպերէն կեալիս ըն երգին-
 քին իրեքը փըռնում, հանց որ քամէ չի խաղ անէ. ետնա ալ
 հրամայում ա մոծակէն թալաւորէն, մըն աման զըհար ալ տը-
 նում ընտեղ. մոծակնէն օման կեալիս ըն դընդըզնէն էն զըհա-
 րուը ճըրում, քինում երայ տալիս Փարաւոն թագաւորէն դոշու-
 նէն. դոշանը լիւս էնքան կծոտում ըն, որ լափ օռչում ըն, իրես-
 նէն տընդըռնում, տչքնէն քըռանում, ալ զուրըր տեսնում չին,
 ընգնում ըն մինմինու կըտորում: Պրծնողը քինում ա թագաւո-
 րէն կոշտը, թա՛ հանց հրաշակործութուն ա ըրալ, հանց փանդ
 եկալ, օյին հանալ, որ մուք մինմինու կըտորալ ըք, համա ուրուն
 դոշունէն որ մընին քեթը ըրնալ չի: Ըտեղ Փարաւոն թագաւորը
 տեսնում ա, որ անանց դոշունի յաղթալ ա, ամբարը կըրալ, թո-
 դալ լիւթ՛ ըոայ ա կեալիս, թողթ կիրում, թա՛ ասէ կեայ աղ-
 ջիկա տամ: Սուղումուն իմաստունը ախջիգն օզում ա եր օնում
 քինում: Էդ ախջիգն ալ կոսպաշտ ա ընում: Կնգանը թողում ա
 տան, ինքը քինում երգիր քարոզելի: Կեալիս ա տեսնում, որ
 կնէգը շատ մալուր ա. «Յէ՛ ըս ըտի մալուր, տիւզնը չիս, ծա-
 րաւ չիս»: Ատում ա. «Տու քինում ըս աշխարհք շոռ կեալիս, ես
 մեալիս ըմ ըստեղ մինակ, ինձ հետէ մըն հանց օթախ շինի, որ
 թուըր եշիմ ըրեայ». թա՛ պա հինջմու բըհամ կըկեայ. կնէգը եր
 ա օնում թա՛ դուշերը պիր հըւաքէ, ընտրանց թեփուռներան չա-
 թան շինի, օթախէն զրաղաւը քաշի, որ թուըր եշիմ՛ ըրեայ:
 Սուղումուն իմաստունը հրամայում ա դուշերը հըւաքուում ըն.
 ետիպաղը կեալիս չի. դուշերէն թագաւորը մարդ ա դարկում
 պիրիլ տալիս: Կեալիս ա թա՛ տու խէ՛ ըս էսքան հէյւանու մեղք
 ընգնում. հինչն ա ըու, ծովէն զրաղէն զամիշը, ոչխարէն ալ
 պուրթը: Պիրում ա անետո զամիշայ չաթան շինիլ տալիս, պըր-
 թայ ալ քեչա օբա շինում, քցում երան, թա՛ թուըր օզում ըս,
 եշի՛ ըրեայ: Քեչա-չաթանը էդ օրաց ա աղաթ ընգած:

Ալըհան քինում ա երգիր քարոզելի. կեամ ա տեսնում կնէ-
 գը տխուր. ասում ա՛ մհնդ խէ տխուր ըս: Թա՛ հունց չի ընիմ
 տխուր, տու Աստուած օնիս պաշտում ըս, ես Աստուած չօնիմ
 պաշտիմ: Քինում ա մըն սանդուղ շինում, պիրում տընում պու-
 ճախումը, թա՛ էս ալ քու Աստուածը տեսնայ, երգըրպաղթուն
 տոր:

Մըն ալ ա քինում մհալումը քարոզելի. կեալիս ա տեսնում
 կնէգը ալըհան տխուր. ասում ա. Մհնդ խէ տխուր ըս, հէն ա
 դու ալ Աստուած օնիս: Թա՛ Դէիմ Աստուածս ասում ա՛ շատ ալ
 տու երգիրպաղթուն ըս տալիս, որ քու մարդը երկիրպաղո-

Թուն չի տալիս հինչո՛ւ ա պէտք: Սուղումուն իմաստունն ալ թա՛ն Ես Աստուած օնիմ, ես օրիշ Աստծու երգրպագոթուն չիմ տալ: Ելում ա տեսնում կնէզը դահի բեթահր տխրալ ա, ասում ա՛ կն վախտը, որ քինիմ ծիս պիրիմ եր ընիմ, դասիդ դամչիս վեր ըմ քցուլու, որ կռանամ եր օնիմ, գիտաց, որ քու կուռքէդ ըմ երգըրպագոթուն տալիս: Բինում ա ծին քաշում պիրում, իրեսը տիրի կուռքն անում, դամչին վեր քցում, կռանում ա որ եր օնէ—լտուռնաւ հանց ա օղում ըլալ կնգանը խաթրը խօշ անէ—բիրդան հոգաւ-մարմնաւ կորչում ա: Մհնգ էս սհաթս ալ Սուղումուն իմաստունէն տեղը մահլում չի, գիղացալ չի քամէ ա տեռալ, հինչ ա տեռալ:

